

# ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի է և տարվա 6 ռուբլի  
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».  
Կամ Tiflis, Rédaction «Mschak».  
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Նմանադրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տոն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւններէ համար վճարում են  
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.  
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՐՈՒՆԻ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ուշադրութիւն դէպի կարօտեալները.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անապատը. Հայոց ներկա-  
յացումները Բագուում. Նամակ Գանձակից.  
Նամակ Նոյնաբերդից. Ներքին լուրեր.—ԱՐ.  
ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը.  
Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.  
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

## ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԵՊԻ ԿԱՐՏԵԱՆՆԵՐԸ

Նորից լսվում է կարիքի ձայնը ուժգին  
կերպով: Չմեղայ ցուրտ օրերը գգացնել  
են տալիս կարօտեալներին վիճակի ծան-  
րութիւնը: Այն խեղճ մարդիկ և ընտա-  
նիկները, որոնք անապատ և աշնանային  
ամիսներում անց էին կացնում իրանց  
օրերը մի կերպ կառավարվելով, այժմ  
նորից բաղկանում են բարեգործական հաս-  
տատութիւնների և մասնաւոր անձերի  
գործերը:

Նրանք յաճախ և շատ յաճախ դիմում  
են նաև մեր խմբագրութեանը, խնդրելով  
որ և է անմիջական նպաստ, կամ ցու-  
ցումներ թէ ուր դիմեն և ինչպէս ձեռք  
բերեն մի փոքր գումար իրանց ամե-  
նասնորոշօժար պէտքերի բաւարարու-  
թեան համար:

Մենք, անկասկած, շատ բան անել կա-  
նող չենք, որովհետև մեր մօտ ժողովուրդ  
գումարները լինում են շատ սահմանա-  
փակ չափով: Մենք մեծ մասամբ մեծ  
տոններին, Ջորջնէքին և Չաստին, բա-  
ժանում ենք այն գումարները, որոնք մեզ  
ուղարկվում են նուիրատուների կողմից:

Դժբաղդաբար, պէտք է արձանագրենք,  
որ կարօտեալները շատ քիչ օգնութիւն  
են ստանում մեր քաղաքի բարեգործա-  
կան հիմնարկութիւններից և մենք երբեմ-  
նայէն վկայ ենք լինում այնպիսի դէպ-  
քերի, երբ այդ հիմնարկութիւններին դի-  
մողները մեզ մօտ են գալիս աւելով, որ  
նրանց ցոյց տուին խմբագրատան վրա,  
որտեղ նրանք կարող են գտնել օգնու-  
թիւն:

Այս տարի խեղճ մարդկանց դրութիւնը  
աւելի ևս ծանրացել է խօլերայի պատ-  
ճառով: Մարդիկ գիտեն, որ պէտք է փոքր  
ի շատ է լաւ կերակրվել, իրանց հետու-  
յանից կանաչանքներից և հոռւ ընդդէմ-  
ներէն, խմել թէյ կամ եռացրած ջուր և  
ուշ դարձնել բնակարանների յարմարու-  
թեան վրա: Արդեօք հէշտ է խեղճ կարի-  
քաւոր մարդու համար կատարել առոշա-  
պահութեան պահանջները, ստանալ լաւ  
մեղք, հաղուստ և բնակարան: Ոչ, դը-  
ժուար է, շատ դժուար: Իսկ կան այնպի-  
սիները, որոնք ոչ թէ չեն մտածում որ  
և է նոր յարմարութեան մասին, այլ  
միայն մի գլխաւոր հոգս ունեն. գրկված  
չը լինել օրական հացից և վնասված չը  
լինել այն անկիւնից, որտեղ նա մի կերպ  
պատասխարկել է:

Մենք դարձնում ենք մեր ընթերցող-  
ների ուշադրութիւնը նրանց շրջապատող  
կարիքի վրա: Օգնեցէ՛ք ձեր խեղճ հարե-  
ւաններին և թեթևացրէ՛ք նրանց հոգսերը:  
Եթէ ձեռք և յարմարութիւն չունէք ան-  
միջական ձեռնհասութեամբ օգտուելու  
լինելու, ուղարկեցէ՛ք ձեր նպատակները  
բարեգործական հաստատութիւններին:

Մեր խմբագրութեան ուղարկված գու-  
մարների մասին մենք կը յիշատակենք  
լրագրի մէջ: Ուրիշ տարիներին օրինակով  
մենք կը բաժանենք մեզ մօտ եղած գու-  
մարը Ջորջնէքի թաթախման օրը:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ա Ն Ա Պ Ա Տ Ը

Դա Սահարայի անապատը է: Ոչ իսկ մեր  
Մուղանի կամ Միլի անապատը: Մարդկու-  
թիւնն էլ շատ տեղերում ներկայացնում է

մոռացված, մութ, անյայտ տարածութիւններ:

Այդ անապատի մասին է մեր խօսքը:  
Մի և նոյն յատկութիւնները: Ամառը թիւն  
է ներկայացնում կեանքը, չոր ու անպտուղ,  
ճնշված դարբին թողած խաղող ու չորացնող  
բռնութիւնների տակ: Նրան չեն մշակում, ա-  
մեն ինչ այստեղ վայրենացած է, կենդանա-  
րար ջուր չէ մտնում գետինը ծաղկեցնելու,  
արգասաւորելու համար:

Մի մի անգամ միայն նա դուրս է գալիս  
աշխարհի առաջ իր անապատային, անհրապոյր  
կերպարանքով:

Անա գալիս է խօլերան: Նա արդէն եկել է:  
Քաղաքներ, որքան կարողանում են, պատ-  
րաստվում են, գործում են: Եթէ շատ են  
խեղճ, եթէ սեփական միջոցներով մի բան  
անել չեն կարողանում, դիմում են բարձրե-  
րին, իրանց ցանկ են յայտնում, դուռ են ծե-  
ծում: Մենք, քաղաքացիներս, արդէն շատ  
բան ենք սովորել անողոր թշնամուց պաշա-  
պանվելու համար: Մենք պահանջում ենք, որ  
մարդը ջուր տան մեզ, որ մեր փողոցները  
կեղտի հետ չուռնան: Մենք բերել ենք տա-  
լիս մեզ համար այն ամենը, ինչ գիտութիւնը  
հնարել է հիւանդութեան դէմ, հնարել է ա-  
ռողջ ապրելու համար:

Իսկ այնտեղ, անապատում, մեր գիւղական  
աշխարհում:

Լրագրից հաղորդեցին այսպիսի մի իր-  
դութիւն: Գանձակի սանիտարական յանձնա-  
ժողովը մտածել է գիւղերի մասին: Պէտք է  
այնտեղ բժշկներ ուղարկել, բայց բժշկներ  
չը կան:

Եւ նա որոշում է ուղարկել գիւղական ա-  
նապատը... անասնաբույժներ:

Որովհետև, ասում է նա, անասնաբույժներն  
էլ «բրանց ձեռք բերած գիտութեամբ» կարող  
են օգտակար լինել:

Այդ վճիռը առաջին անգամից լօգիկական  
է երևում: Անասնաբույժները հօ բժշկում են ա-  
նասուններին: Հետեւաբար նրանք նայալիս  
աշողութեամբ կարող են բժշկել և մարդկանց:  
Ինչու չէ:

Այն մի ժամանակ էր, երբ մարդը համար  
վում էր մի առանձին բարձր էակ, առանձին  
մի ազնիւ նիւթից, մի ուրիշ տեսակ կաւից  
կերտված, աստուածների որդի, անմահների  
դասից միայն մի թուղի պատճառով դուրս  
վնասված:

Այժմ ոչնչացած է այդ հին միամտութիւնը:  
Դարու յիշ ապացուցեց, որ մարդը մի դէմք է  
աշխարհի կենդանական ցեղերի մէջ: Եւ այսօր  
ամեն մէկը գիտէ, որ մարդն էլ կենդանի է:

Եւ երբ այսպէս է, ցաւի, հիւանդութեան  
դէպքում նրան կարող է օգնել անասնաբույժը  
նայալիս աշողութեամբ, որ նա ցոյց է տա-  
լիս կենդանիներին բժշկելու մէջ:

Կենդանիների ֆիզիկական աշխարհը մի և  
նոյն ընդհանուր հիմքերի վրա է կառուցված:  
Կանաքի պայմանները ընդհանուր առմամբ մի  
և նոյն են: Ուրեմն և անասնաբույժներն էլ  
կարող են օգտակար լինել խօլերայի վտան-  
գին ենթակված մարդկութեան:

Վճիռը, կրկնում ենք, լօգիկական հետևողու-  
թիւնների տեսակետից շատ չէ տարօրինակ:

Երբ չը կայ մարդուն իբրև մարդ բժշկող,  
պէտք է ուրեմն ձեռքից չը տալ մարդուն իբրև  
անասուն բժշկելու միջոց:

Բայց այստեղ ծագում է մի հարց: Ինչո՞ւ  
անասնաբույժը գիտում միայն կարող է օգ-  
տակար լինել, ինչո՞ւ նոյն անասնաբույժը չէ  
կարող քաղաքներում էլ օգնել:

Չէ՞ որ մարդը մի և նոյն է—գիւղում թէ  
քաղաքում: Եւ երբ այսպէս է, պէտք է, ուրեմն,  
բաժանումներ չը դնել, անասնաբույժին գիւղը  
չուղարկել, իսկ բժշկին քաղաքում պահել:

Եթէ գիւղում բժշկներ չը կան, պատճառն  
այն է, որ նրանք քաղաքներին են հարկաւոր:  
Բայց ինչո՞ւ միմիայն քաղաքներին պիտի  
հարկաւոր լինեն նրանք: Արդարութիւնը պա-  
հանջում է, որ գիւղի ու քաղաքի մարդը միա-  
տեսակ նիւթ ընդունվին բժշկական օգնու-  
թեան տեսակետից: Արդարութիւնը պահանջ-

նում է, որ անասնաբույժներին մի մասը քաղա-  
քաւորվի, քաղաքային բժշկներին մի մասի  
տեղը գրաւելու, որպէս զի այս մասն էլ տե-  
ղափոխի գիւղերը: Այսպիսով հաւասարու-  
թիւն կը լինէր թէ քաղաքում և թէ գիւղում.  
անասնաբույժն ու բժիշկը հաւասարաշափ օգ-  
տակար կը լինէին թէ քաղաքում և թէ գիւ-  
ղում:

Բայց այդպէս չէ: Անասնաբույժը խնամքով  
հետեցրված է քաղաքից, այստեղ շատ վայրե-  
նի, շատ վրդուկեցուցիչ բան կը լինէր, եթէ  
նա բժիշկը մարդկանց:

Իսկ այնտեղ: Այնտեղ կարելի է: Որովհետև  
այնտեղ անապատ է: Իսկ դժբախտ, չոր անա-  
պատում անասնաբույժն էլ մի բան է: Նոյն  
իսկ մեծ բան:

Տարիներով, տասնեակ տարիներով գոյու-  
թիւն ունի անապատի երկինք աղաղակող ա-  
նօգնականութիւնը: Խօլերայից վախենում են,  
որովհետև նա միանգամից ջարդում է, հնձում  
է: Բայց խօլերան շատ յաճախ երևացող հիւ-  
րէ: Միևնուրեւ անապատը ունի մշտական, ան-  
փոփոխ, գույն և ոչ պակաս ահաւոր հիւրեր,  
որոնք նայալիս հնձում են, բայց առանց մեծ  
աղմուկի, լուռ ու հանդարտ:

Այդ մշտական հիւրերի դէմ մաքառելու հա-  
մար նոյն իսկ անասնաբույժներ էլ չեն գտնում:  
Ամեն ինչ թողնված է անապատի կամքին և  
հաճոյքին: Ոչինչ կտորած, ոչինչ կատաղու-  
թիւն չէ սարսափեցնում: Շուրջը ամեն ինչ  
անապատ է:

Բայց անա երևաց խօլերան: Նա սարսա-  
փեցնում է: Եւ սարսափից բռնված ժամանա-  
կը միայն մենք մտաբերում ենք անապատը:  
Մենք ուզում ենք, որ այնտեղի սարսափի դէմ  
էլ մի բան անենք: Եւ ուղարկում ենք այն-  
տեղ... անասնաբույժներ:

Աւելի այդպէ, աւելի բարձրագոյն փաստ  
անապատի կորածութիւնը աշխարհի առաջ  
ցոյց տալու համար ուրիշ մի աղետ չէր կա-  
նող դուրս հանել: Այդ արաւ խօլերան:

Նա շատ ու շատ հրէշաւոր պակասութիւն-  
ներ, որքանի անարդարութիւններ է դուրս  
բերում: Բայց հազիւ թէ դրանցից մէկը այն-  
քան կախճեցնող լինի, ինչպէս այս անասնա-  
բույժական օգնութիւնը:

Այդ անապատը... Ե՛րբ նա կը դադարէ ա-  
նասունների աշխարհ դառնալուց: Ե՛րբ նա կը  
մարդկայնանայ...

## ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ ԲԱԳԻՈՒՄ

(Նամակ Բագուից)

Նոյեմբերի 26-ին հայոց խումբը ներկայաց-  
րեց Նադեհուսովի դրաման «Վանիւշինի գա-  
ւաղները», թարգ. Ալիխանեանի: Թատրոնը  
կիսով չափ դատարկ էր և այդ գույնէ այն  
պատճառով, որ նոյն երեկոյան այստեղի հա-  
սարակական ժողովարարնում յայտնի ունե-  
ղերասան Պետիպայի ներկայացումն էր:

Ներկայացումը ընդհանրապէս աշող անցաւ,  
չը նայած մի բանի մասին: Բոլոր թերութիւն-  
ները: Վանիւշինի (հօր) դերը կատարում էր  
Պետրոսեան, որի խաղը սկզբից մինչև վերջ  
շատ մտածված և կենդանի էր, այնպէս որ  
հանդիսականը կարող էր հետևել, թէ ինչպէս  
Վանիւշինի ներքին, հոգեկան խռովութիւնը  
աստիճան առ աստիճան դարձանում է և  
հասցնում այդ մարդուն ինքնասպանութեան:  
Ալիխանեան խաղում էր Ալեքսէյի դերը, որը  
և անցկացրեց զգալի: Կար միայն մի պա-  
կասութիւն և այն էլ տեխնիկական տեսակէ-  
տից—երբորդ գործողութեան մէջ հօր հետ  
տեսակցութեան ժամանակ, նա մի քիչ շտա-  
պում էր և իր յայտնի բեպիկան աւելի շուտ  
սկսեց, բան թէ վերջացան հօր խօսքերը և  
վերջապէս Ալիխանեան կիսով չափ ծածկում  
էր հօրը. այդ տեսարանը թող էր: Կօնստան-  
տինի դերը կատարում էր Օհանեան, բայց  
պիսի խելացի քայլերը, շատ ցանկալի է, որ  
պէտք է ասած, որ դա նրան չափողից, որով-  
հետև դերասանը շատ միատեսակ և անկեն-  
դան էր խաղում և կասես թէ մի ինչ որ ու-

րիշ գործով էր զբաղված. մեր կարծիքով Օհա-  
նեան ստեղծված չէ այդպիսի դերերի համար:  
Փառանձմ' Արիւնա Իվանովնայի դերում  
լաւ էր և մի անգամ էլ ապացուցեց,  
որ բարեխիղճ և փորձված դերասանուհին  
միշտ կարող է աշող անցկացնել երկրորդա-  
կան կանացի դերերը: Տ. Նոնիկեան կաղ  
Կլավդիայի դերում մի քիչ չափազանցած  
կրթով էր խաղում, նա շատ դիւրագրգիւ էր,  
բայց և այնպէս լաւ տպաւորութիւն թողեց,  
տիկնոջ գրիմը բաւական աշող էր:

Օր. Քնարիկ քանչիւն էր թէ Լիւդմիլայի  
և թէ Իննայի դերում. օրերով կենդանի և  
աշխոյժ խաղը ոչ մի վայրկեան թող չէր և  
գրաւում էր հանդիսականին:

Աղեան՝ Կրասավինի դերում մտքեց մի  
փոքր շարժողութիւն. նա չափազանցում էր  
հարբած Կրասավինի շարժողութիւնները, բայց  
և այնպէս կարողացաւ կատարել այդ փոքրիկ  
դերը բաւական տիպիկ: Վատ չէր և տ. Ստե-  
փանեան Լենօկայի դերում, թէև մենք նկա-  
տել ենք շարունակ, որ տիկնոջ աշող չէ սո-  
վորում իր դերերը և այդ պակասութիւնը  
մեծ խոչընդոտ է հանդիսատեսին տիկնոջ բե-  
մական ընդունակութեան երևան գալուն:

Ստեփանեան խաղում էր Շչեռուկինի դերը,  
որը և մտածված կատարեց. մեզ դուր չեկաւ  
միայն նրա գրիմը. պարկը այնքան վատ էր,  
որ գլխի վրա զանազան խուլեր էին երևում:  
Երկու գրիմագիտականներ Անեայի և Կատեայի  
դերերը կատարում էին օր. Աստղիկ և Լիւսի  
և թէպէտ օրերորդները սիրողներ էին և ոչ  
խելական դերասանուհիներ, բայց և այնպէս  
լաւ տպաւորութիւն թողին. միայն մի նկա-  
տողութիւն—օր. Լիւսին առաջին գործողու-  
թիւնում չէր կարողանում զսպել իր ծիծաղը.  
ծիծաղում էին և հանդիսականները:

Արշ. Առաքելեան

## ՆԱՄԱԿ ԳՆԱԶԱԿԻՑ

Դեկտեմբերի 5-ին

Ամսիս 3-ին Գանձակի բանաստեղծից տէր-  
Մկրտիչ տէր-Յովսէփեանցը, տէր-Շմաւոն Բո-  
րեանցը, տէր-Աւետիս Շահումյանցը ու  
տէր-Անանիա Շիրակունիս հայերից բաղա-  
ցած մեծ բազմութեան ուղեկցութեամբ, թուով  
մօտ երեք հարիւր հոգի, այցելեցին Գանձակի  
մեծ մզկիթը (Շահ-Աբբաս) ու Գանձակի և  
նրա գաւառի հայ ժողովրդի կողմից ցաւակ-  
ցութիւն յայտնեցին մահմեդական հոգևորա-  
կանութեան ու ժողովրդի ներկայացուցիչնե-  
րին նորեւն Պարսկաստանում վախճանված  
Նաջաֆի մեծ մուշտէի Մօլլա Մահմէդ Շա-  
րաբանցի մահվան առիթով:

Հայ բանաստեղծն ու ժողովուրդը անկեղծ  
սիրով ու մեծ համակրութեամբ ընդունվեցին  
մզկիթում թէ հոգևորականութեան և թէ  
թուրք ժողովրդի կողմից: Մահմեդականների  
ցանկութեամբ բանաստեղծը երգեցին հոգե-  
հանգստեան շարափաններ ու վերջում քահա-  
նաներից միւրը, Անանիա Շիրակունիս, դար-  
ձաւ ներկայ գտնվող թուրք ու հայ բազմու-  
թեան մի ճառով թուրքերէն լեզուով, որով լաւ  
տպաւորութիւն դործեց ունկնդիրների վրա:  
Հայ բանաստեղծի ճառը վերաբերվում էր երկու  
դրացի աշխարհից ազգերի սերունդների միա-  
թեան ու եղբայրութեանը, նրանց բարի հարե-  
ւանութեանը: Գանձակի մահմեդական ազգա-  
բնակիչները մեծ երախտագիտութեամբ վի-  
րաբերվեց հայերի այդ քայլին, որը մենք ան-  
պայման գովել կարող ենք. մի երկ-  
կասութիւն և այն էլ տեխնիկական տեսակէ-  
տից—երբորդ ազգերի համերաշխութիւնը ու  
փոխադարձ անկեղծ բարեացակամութիւնն  
ընդհանուր բարօրութեան գլխաւոր հիմնաքա-  
րերն են: Այդ պարզ ճշմարտութիւնը պէտք է  
շատ կրկնել «Մշակը», հաւատարիմ մնալով  
վերջապէս Ալիխանեանի կիսով չափ ծածկում  
էր հօրը. այդ տեսարանը թող էր: Կօնստան-  
տինի դերը կատարում էր Օհանեան, բայց  
պիսի խելացի քայլերը, շատ ցանկալի է, որ  
պէտք է ասած, որ դա նրան չափողից, որով-  
հետև դերասանը շատ միատեսակ և անկեն-  
դան էր խաղում և կասես թէ մի ինչ որ ու-


Ստ. Տէր-Աւետիքեան







This image shows a blank, aged, cream-colored page, likely an endpaper or flyleaf of a book. The paper has a slightly textured appearance with some minor creases and discoloration, characteristic of old paper. The left edge of the page is bound into a dark, possibly black, inner cover material. The overall lighting is even, highlighting the subtle variations in the paper's tone.



1865. Մոսկովա 1870. Ս - Պետերբ. 1882. Մոսկովա 1896. Նիժնի-Նովգ.

# ԻՐԿԵՆԱԿՈՑԻԿՆԵՐԻ

ևս որիչ ռեաիմէ գործուածքների ձանար  
**ԲԱՐՁՐԱԳՈՅՆ** պ ա ղ գ ե շ ի

(GRAND-PRIX)  
**ՊԱՐԻԶԻ ՅՈՒՅԱՆՆԵՐԻՍՈՒՄ**

արժանացաւ Ռուսաստանի համար

## ՄԻՄԻԱՅՆ

Թեճ ենեղենների

ԱՐԴԻՆԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

## ՈՌԻՍ-ԱՄԵՐԻԲԱԿԱՆ

ընկերութիւնը Ս. Պետերբուրգում, որ հիմնված է  
 1860 թւին:

Մաղրում է ոչտինէ կրկնակօղիկ դնած ժա-  
 մանակ ուշք դարձնել նրպանի դրօշմանիշի վրա,  
 մանաւանդ ընկերութեան հիմնարկութեան թւա-  
 կանի վրա— ,1860՝ և **С. ПЕТЕР-  
 БУРГЪ** բառի վրա՝ կարմիր եռանկիւնու  
 մէջը (գործարանի դրօշմանիշը):

Մեծ քանակութեամբ վաճառում է  
 „**ՆԻՐՈՊՈԼԻ ՆԷՅՇԵԼԼԵՐԻ**“  
 Առևտրական Տունը:

Ս. Պետերբուրգում, Մոսկովայում, Տաշկէնտում և

ուսի, Եկատերինբուրգում, Բուսովում (Դոնի վրա), Մարիօվում, Իրկուսկում, Տաշկէնտում և

**ԹԻՖԼԻՍՈՒՄ**

23—80